

«Վավերացնում եմ»

Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
19 սեպտեմբերի 2006 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 օգոստոսի 2006 թվականի N 1277-Ն

1049 ՀՈՂԵՐԻՆ ԱՐՏՈՏՈՒՄԻՑ ՊԱԳՊԱՆԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ, ՀՈՂՆ ԱՐՏՈՏՈՒՆՈՂ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿԻ ԵՎ ՀՈՂԵՐԻ ԱՐՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 7-ի N 419-Ն որոշման` Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հաստատել հողերն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահանջների, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկի և հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման տեխնիկակուսն կանոնակարգը` համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին` սույն որոշման պաշտոնական հրապարակման պահից վեց ամսվա ընթացքում` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատել հողն աղտոտող վնասակար նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների, դրանց ըստ վտանգավորության դասակարգման և հողերի սանիտարական վիճակի ցուցանիշների մասին սանիտարական կանոններն ու նորմերը.

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո.

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

2006 թ. սեպտեմբերի 14
Երևան

Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՀՈՂԵՐՆ ԱՂՏՈՏՈՒՄԻՑ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ,
ՀՈՂՆ ԱՂՏՈՏՈՐ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿԻ ԵՎ
ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Հողերն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահանջների, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկի և հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման տեխնիկական կանոնակարգով (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգ) սահմանվում են բոլոր կատեգորիաների հողերն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահանջները, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկը, հողերի աղտոտվածության աստիճանի պարամետրերը և աղտոտվածության աստիճանի ազդեցության հաշվարկն ու գնահատումը, ինչպես նաև սանիտարական վիճակի ցուցանիշների անվանացանկը:

2. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջները տարածվում են Հայաստանի Հանրապետության տարածքի՝ ըստ նպատակային ու գործառական նշանակության բոլոր կատեգորիաների հողերի վրա՝ տարբեր նշանակության օբյեկտների տեղադրման, նախագծման, շինարարության, վերակառուցման, շահագործման դեպքում, և պարտադիր են բոլոր հողօգտագործողների համար:

II. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3 Սույն տեխնիկական կանոնակարգում կիրառվում են հետևյալ հասկացությունները՝ *հողի աղտոտում*՝ մարդու գործունեության արդյունքում հողում վտանգավոր ու թունավոր նյութերի և օրգանիզմների այնպիսի քանակության կուտակում, որն առաջացնում է հողերի դեգրադացիա կամ հողային ծածկույթի կառուցվածքի, ծնաբանության ու միկրոֆլորայի փոփոխություն, հողի ֆիզիկաքիմիական հատկությունների վատթարացում, հողի բերրության, ածեցվող մշակաբույսերի տեխնոլոգիական, սննդային, սանիտարա-հիգիենիկ արժեքների ու հողի հետ կապ ունեցող բնական այլ օբյեկտների որակի նվազեցում:

հողի քիմիական աղտոտում՝ հողօգտագործման գործոնի (գյուղատնտեսական, արդյունաբերական, կոմունալ և այլն) ուղղակի կամ անուղղակի ազդեցության հետևանքով հողի քիմիական (օրգանական և անօրգանական նյութերի) կազմի՝ փոփոխություն, որը հանգեցնում է հողի որակի վատթարացման և կարող է վտանգ սպառնալ մարդու առողջությանը, կենդանական ու բուսական աշխարհին:

հողի օրգանական աղտոտում՝ բնութագրում է հողի աղտոտման աստիճանն օրգանական նյութերով՝ ըստ ածուխակային և նիտրատային ազոտների, որոնք հանդիսանում են ազոտ պարունակող օրգանական նյութերի քայքայման քիմիական ցուցանիշերը

հողի ֆոնային աղտոտվածություն կամ ֆոնային մակարդակ՝ որոշակի տարածքի հողում աղտոտող նյութերի պարունակությունը՝ մինչև նոր գործունեություն սկսելու հետևանքով այդպիսի աղտոտիչների ներմուծումը:

հողի օդաչոր նմուշ՝ լաբորատոր տարածքի օդի խոնավության և ջերմաստիճանի պայմաններում մինչև հաստատուն զանգվածը հասցված հողի նմուշ:

սահմանային թույլատրելի կոնցենտրացիա (ՍԹԿ)՝ քիմիական նյութի առավելագույն թույլատրելի կոնցենտրացիան հողի վերնաշերտի օդաչոր նմուշում (մգ/կգ): Այս կոնցենտրացիան չպետք է ունենա ուղղակի կամ անուղղակի բացասական ազդեցություն տվյալ տարած-

քի հողին հարող շրջակա միջավայրի և մարդու առողջության, ինչպես նաև հողի ինքնամաքրման ունակության վրա:

մոտավոր թույլատրելի կոնցենտրացիա (ՄԹԿ)՝ քիմիական նյութի մոտավոր թույլատրելի կոնցենտրացիան հողի վերնաշերտում (մգ/կգ):

բիոցենոզ՝ նյութերի շրջանառությունն ապահովող բույսերի, կենդանիների և միկրոօրգանիզմների պատմականորեն ձևավորված համակցություն, որն ունի ինքնակարգավորման ունակություն:

հողի կենսաբանական ակտիվություն՝ բնորոշում է մանրէների ընդհանուր քանակը, հողային միկրոօրգանիզմների խմբերը, ածխածնի և ազոտի միացությունների վերափոխումը հողում («հողի շնչառությունը»), սանիտարական թիվը, ամոնիակային և միտրատային ազոտի շարժը, ազոտի ֆիքսումը, դեմիտրիֆիկացիան), հողի թթվայնության և օքսիդավերականգնման պոտենցիալի շարժը, ֆերմենտատիվ համակարգի ակտիվությունը և այլն:

վտանգավորության դաս՝ քիմիական նյութերի դասակարգում՝ ըստ հողի, բույսերի, կենդանիների և մարդկանց վրա դրանց ունեցած հնարավոր բացասական ներգործության:

սանիտարական թիվ՝ հողի սպիտակուցային (հումուսային) ազոտի քանակի (մգ/100գ չոր հող) հարաբերությունն է «օրգանական ազոտի» (ամոնիակային և միտրատային ազոտ) քանակին: Սանիտարական թիվն ամուլղակիորեն բնորոշում է հողի հումուսացման գործընթացը և թույլ է տալիս գնահատել հողի ինքնամաքրման ունակությունն օրգանական աղտոտիչներից:

հողի սանիտարական վիճակի ցուցանիշ՝ հողերի սանիտարական վիճակը գնահատող (սանիտարաքիմիական, սանիտարամանրէաբանական և այլն) չափանիշների համալիր:

III. ՀՈՂԵՐՆ ԱՐՏՈՏՈՒՄԻՑ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

4. Հողերն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահանջները ներառում են՝

ա) պարարտանյութերի, մելիորացիայի քիմիական միջոցների, վնասատուների դեմ պայքարի և քիմիացման այլ միջոցների՝ հողի մեջ ներմուծման նորմերը, ներմուծման ձևն ու ժամանակը որոշելիս՝ հողերի ագրոքիմիական հետազոտությունը, հիվանդությունների և վնասատուների առաջացման կանխատեսումը, հողերի փաստացի աղտոտումը, ինչպես նաև պարարտանյութերի ու քիմիական միջոցների կիրառման առաջնայնության որոշումը՝ համաձայն դրանց վտանգավորության դասի, հաշվի առնելը:

բ) արդյունաբերական և կենցաղային թափոնները (եթե դրանք պարունակում են հողի սնուցման կամ քիմիական մելիորացիայի համար անհրաժեշտ տարրեր) որպես պարարտանյութ կամ քիմիական մելիորացիայի միջոց օգտագործելիս՝ դրանց քիմիական կազմի մանրակրկիտ ուսումնասիրություն իրականացնելը՝ հողի մեջ ժանր մետաղների և այլ թունավոր տարրերի ու միացությունների ներմուծումը կանխելու նպատակով:

գ) թափոնները, արտանետումները, արտահոսքերը, կեղտաջրերը և դրանց նստվածքները հեռացնելը ու օգտահանելը՝ հողերի աղտոտումը կանխարգելող միջոցառումների իրականացմամբ:

դ) պեստիցիդները, համքային պարարտանյութերը, այլ քիմիացման միջոցները պահպանելն ու տեղափոխելը՝ շրջակա միջավայրի աղտոտումը կանխարգելող միջոցառումների իրականացմամբ:

ե) նոր կառուցվող արդյունաբերական կազմակերպությունների, տեխնոլոգիական գծերի նախագծերում հողերի քիմիական աղտոտումը բացառող մաքրման կառույցների նախատեսումը:

զ) գծային կառույցների ու մելիորատիվ օբյեկտների շինարարության, կառուցապատման և շինարարական այլ աշխատանքների կատարման ընթացքում արդյունաբերական և կենցաղային թափոններով, կոշտ առարկաներով, քարերով, խճով ու շինարարական աղբով հողերի աղտոտումն ու աղբոտումը բացառելը:

**IV. ՀՈՂՆ ԱՐՏՈՏՈՂ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՀՈՂԵՐԻ
ՂԱՍԱԿԱՐԳՍԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ԸՍՏ ԱՐՏՈՏՈՂ
ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ**

5. Հողն աղտոտող քիմիական նյութերի կամ դրանց խառնուրդների՝ ներառյալ պես-տիցիդները, ցանկը սահմանված է N 1 աղյուսակում.

Աղյուսակ N 1

Նյութերի կամ դրանց խառնուրդների անվանումները	Նյութերի կամ դրանց խառնուրդների անվանումները
1	2
Ազելոն (ատրագին + պրոմետրին)	
Ալֆամեթիլստիրոլ	Հեքսաքլորոբութադիեն
Ատրագին	Հեքսաքլորցիկլոհեքսան (հեքսաքլորան)
Արաեն	Հեպտաքլոր
Բանվել Դ	Նիկել
Բենզոլ	Նիտրատներ
Բենզ(ա)պիրեն	Պատանոլ
Գրանոզան	Պարարտանյութեր՝ հատիկավոր
Դակտալ	Պրիմժ
Դայապոն	Պոլիքլորկամֆեն
Դիլոլ	Պոլիքլորպինեն
4,6- դինիտրո- Օ- կրեզոլ (ՈՆՕԿ)	Պրոմետրին
4,4- դիքլորդիֆենիլ-3-քլոր- մեթիլմեթան (ԴԴՏ) և դրա ածանցյալները	Պրոպանիդ
2,4- դիքլորֆենիլքացախաթթու (2,4 - Դ)	Ռոզոլ
2,4- Դիքլորֆենոլ	Ռոմիտ
2,4- դիքլորֆենիլքացախաթթվի քիչ ցնդող էթերներ	Սիմագին
Դիուրոն	Սնդիկ
Իզոպրոպիլբենզոլ	Սնդիկ և կապար
Իզոպրոպիլբենզոլ և ալֆամեթիլստիրոլ	Սոլայերֆոսֆատ
Էրադիկան	Սևին
Լինուրոն	Տիոզան
Ծարիլ	Տրոդոն
Ծծումբ	Տրուոլ
Կապար	Տրեֆան
Կարբատիոն	Ցինեբ
Կարբոֆոս	Ցինկ
Կելտան	Վանադիում
Կորայտ	Քացախալոեհիդ
Կուպրոզան	Քլորամպ
Մանգան	Քլորոֆոս
Մանգան (+) և վանադիում	Քրոմ՝ վեցվայենտանի
Մեթաթիոն	Ֆենուրոն
Միլբեկս	Ֆոզալոն
Մետաֆոս	Ֆորմալդեհիդ
Մոնուրոն	Ֆոսֆոր (P ₂ O ₅)
Յալան	Ֆտոր
Հեքսաքլորցիկլոհեքսան (լինոան)	Ֆտալոֆոս

6. Հողերն ըստ քիմիական աղտոտվածության աստիճանի դասակարգվում են հողերում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) և այդ նյութերի ֆոնային մակարդակների հիման վրա:

Ըստ աղտոտվածության՝ հողերը դասակարգվում են՝

ա) խիստ աղտոտված հողերի, որոնցում աղտոտող քիմիական նյութերի պարունակու-

թյունը մի քանի անգամ գերազանցում է դրանց սահմանային թույլատրելի կոնցենտրացիան կամ մոտավոր թույլատրելի կոնցենտրացիան, քիմիական աղտոտվածությամբ պայմանավորված ունեն ցածր կենսաբանական ակտիվություն, ֆիզիկամեխանիկական, քիմիական և կենսաբանական բնութագրերի նշանակալի փոփոխություններ, ինչի հետևանքով քիմիական նյութերի պարունակությունը մշակաբույսերում գերազանցում է սահմանված նորմերը,

բ) միջին աղտոտված հողերի, որոնցում նկատվում է քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների գերազանցում՝ առանց հողերի հատկությունների ակնհայտ փոփոխության,

գ) քիչ աղտոտված հողերի, որոնցում քիմիական նյութերի պարունակությունը չի գերազանցում սահմանային թույլատրելի կոնցենտրացիան, սակայն ֆոնային մակարդակից բարձր է:

7. Հողերի աղտոտվածության վտանգավորությունը որոշվում է շրջակա միջավայրի (ջուր, օդ), սննդանյութերի և դրանց միջոցով մարդու առողջության վրա, ինչպես նաև հողի կենսաբանական ակտիվության և ինքնամաքման ունակության վրա աղտոտվածության աստիճանի հնարավոր բացասական ներգործությամբ:

Ըստ վտանգավորության հողերի քիմիական աղտոտվածության աստիճանը բաժանվում է հետևյալ կատեգորիաների՝

- անվտանգ,
- թույլատրելի,
- չափավոր վտանգավոր,
- վտանգավոր,
- խիստ վտանգավոր:

8. Հողերի կայունությունը քիմիական աղտոտող նյութերի նկատմամբ գնահատվում է ըստ հողն աղտոտող կոնկրետ քիմիական նյութի կամ նյութերի խմբի, որոնք տարբերակվում են՝

ա) հողաքիմիական ակտիվ նյութեր, որոնք հողում ստեղծում են թթվահիմնային և օքսիդավերականգնման պայմաններ՝ դրանով իսկ ազդելով ընդհանուր հողագեոքիմիական վիճակի վրա: Դրանք գերազանցապես հողի որակը և բերրիությունը վատթարացնող մակրոտարրերն ու դրանց միացություններն են:

բ) կենսաքիմիական ակտիվ նյութեր, որոնք առաջին հերթին ազդում են օրգանիզմների (միկրոֆլորայի, բուսականության, կենդանիների) վրա:

գ) նյութեր, որոնք հողում գտնվելիս ընդունակ են միգրացիայի (տեղափոխման) դեպի մթնոլորտ, բուսականության մեջ, մակերևութային և ստորերկրյա ջրեր:

9. Ըստ քիմիական աղտոտող նյութերի նկատմամբ կայունության աստիճանի և դրանց նկատմամբ հողի հակազդող պատասխան ռեակցիայի բնույթի՝ հողերը տարանջատվում են՝

- խիստ կայուն հողերի,
- միջին կայունության հողերի,
- քիչ կայուն հողերի:

10. Հողերի կայունության աստիճանը քիմիական աղտոտող նյութերի նկատմամբ բնութագրող հիմնական ցուցանիշներն են՝

- ա) հողի հումուսային վիճակը,
- բ) թթվահիմնային հատկությունները,
- գ) օքսիդավերականգնման հատկությունները,
- դ) կատիոնափոխանակման հատկությունները,
- ե) կենսաբանական ակտիվությունը,
- զ) ստորերկրյա ջրերի մակարդակը,
- է) հողում լուծված վիճակում գտնվող նյութերի մասնաբաժինը:

11. Քիմիական աղտոտող նյութերի կայունության գնահատումը կատարվում է հետևյալ ցուցանիշներով՝

- ա) ցուցանիշներ, որոնք բնութագրում են հողերի հատկությունների սեզոնային կամ կար-

ճաժամկետ (2-5 տարի) փոփոխությունները և անհրաժեշտ են հողածածկույթի ընթացիկ վիճակը գնահատելու համար՝ կապված բերքատվության կանխատեսումների և պարարտանյութերի ու պեստիցիդների սեզոնային ներմուծման, ոռոգման և ընթացիկ տարվա բերքատվության մակարդակի բարձրացման այլ միջոցառումների հետ: Հողերի հատկությունների կարճաժամկետ փոփոխություններն ախտորոշվում են դրանց խոնավության, թԻ-ի մեծության, հողային նվաճի լուծույթների բաղադրության, հողերի շնչառության և բույսերին հասանելի սնուցիչ նյութերի պարունակության փոփոխությունների հիման վրա,

բ) երկարաժամկետ փոփոխությունների ցուցանիշներ, որոնք ի հայտ են գալիս 5-10 և ավելի տարիների ընթացքում և արտացոլում են աղտոտվածության արդյունքում հողերի հատկությունների փոփոխությունների անբարենպաստ ուղղվածությունը: Դրանք ներառում են հողում հումուսի պարունակության և դրա պաշարի պարբերական չափումները՝ հումինային թթուների բաղադրության մեջ մտնող ածխածնի հարաբերությունը ֆուլվաթթուների ածխածնին, հողերի էրոզիոն կորուստները, կառուցվածքային վիճակը, փոխանակման կատիոնների կազմը, ընդհանուր հիմնայնությունը, թթվայնությունը և աղերի պարունակությունը,

գ) հողերի հատկությունների անբարենպաստ փոփոխությունների զարգացման (ի հայտ գալու) վաղ հայտնաբերման (ախտորոշման) ցուցանիշներ, որոնք անհրաժեշտ են կենսաբանական թեստերի, միկրոմորֆոլոգիական դիտարկումների, հողերի ջրաաղային, օքսիդավերականգնման և թթվահիմնային ռեժիմների վերլուծության համար:

V. ՀՈՂԵՐԻ ԱՐՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

12. Հողերի աղտոտվածության աստիճանի ազդեցությունը հաշվարկվում է հողերի աղտոտվածության կոնցենտրացիայի գործակցի, հողերի բազմատարրային աղտոտվածության ինտեգրալային ցուցանիշի և հողի հակազդող պատասխան ռեակցիայի գործակցի հիման վրա:

13. Հողերի աղտոտվածության կոնցենտրացիայի գործակիցը (H_4) հաշվարկվում է 1-ին բանաձևի համաձայն՝

$$H_4 = \frac{C}{C_p} \quad \text{կամ} \quad H_4 = \frac{C}{C_{\text{ՍԹԿ}}} \quad (1),$$

որտեղ՝

C -ն աղտոտող նյութերի ընդհանուր պարունակությունն է, մգ/կգ,

C_p -ն աղտոտող նյութերի միջին ֆոնային մակարդակն է, մգ/կգ,

$C_{\text{ՍԹԿ}}$ -ն աղտոտող նյութի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան է, մգ/կգ.

14. Հողերի բազմատարրային աղտոտվածության ինտեգրալային ցուցանիշը (H_{3j}) հաշվարկվում է 2-րդ բանաձևի համաձայն՝

$$H_{3j} = \sum_j \frac{C_j}{C_{p_j}} \quad (2),$$

որտեղ՝

C_j -ն վերահսկվող աղտոտող նյութերի գումարն է, մգ/կգ,

C_{p_j} -ն աղտոտող նյութերի ֆոնային մակարդակների գումարն է, մգ/կգ:

15. Հողի հակազդող պատասխան ռեակցիայի գործակիցը (K_4)՝ ըստ հողերի վիճակի վրա ազդող քիմիական աղտոտվածության, հաշվարկվում է 3-րդ բանաձևի համաձայն՝

$$K_h = \frac{[A - A_{\phi}]}{A_{\phi}} \quad (3),$$

որտեղ՝

A-ն և A_φ-ն վերահսկվող պարամետրերն են համապատասխանաբար աղտոտված և ֆոնային փորձանմուշներում՝

16 Գողերի քիմիական աղտոտվածության աստիճանը գնահատվում է՝

ա) ըստ սանիտարական թվի՝ համաձայն N 2 աղյուսակում ներկայացված նորմերի.

Աղյուսակ N 2

Գողերի բնութագիրն ըստ աղտոտվածության	Սանիտարական թիվը
Սաքուր (գործնականորեն)	0,98 և դրանից մեծ
Թույլ աղտոտված	0,85-ից մինչև 0, 98
Աղտոտված	0,7-ից մինչև 0, 85
Խիստ աղտոտված	փոքր է 0,7-ից

բ) ըստ աղտոտվածության վտանգավորության կատեգորիաների և հողում պարունակվող օրգանական և անօրգանական միացությունների վտանգավորության դասերի՝ համաձայն N 3 աղյուսակում ներկայացված նորմերի.

Աղյուսակ N 3

Աղտոտման կատեգորիան	Սանիտարական թիվը	Աղտոտման գումարային ցուցանիշը	Պարունակությունը հողում, մգ/կգ					
			վտանգավորության 1-ին դաս		վտանգավորության 2-րդ դաս		վտանգավորության 3-րդ դաս	
			օրգանական միացություն	անօրգանական միացություն	օրգանական միացություն	անօրգանական միացություն	օրգանական միացություն	անօրգանական միացություն
Անվտանգ	0,98 և դրանից մեծ	-	ֆոնային արժեքից մինչև ՍԹԿ	ֆոնային արժեքից մինչև ՍԹԿ	ֆոնային արժեքից մինչև ՍԹԿ	ֆոնային արժեքից մինչև ՍԹԿ	ֆոնային արժեքից մինչև ՍԹԿ	ֆոնային արժեքից մինչև ՍԹԿ
Թույլատրելի	0,98 և դրանից մեծ	փոքր է 16-ից	1-ից մինչև 2 ՍԹԿ	ֆոնային 2 արժեքից մինչև ՍԹԿ	1-ից մինչև 2 ՍԹԿ	ֆոնային 2 արժեքից մինչև ՍԹԿ	1-ից մինչև 2 ՍԹԿ	ֆոնային 2 արժեքից մինչև ՍԹԿ
Զափավոր վտանգավոր	0,85-ից մինչև 0, 98	16-ից մինչև 32					2-ից մինչև 5 ՍԹԿ	ՍԹԿ-ից մինչև 4 ատավ
Վտանգավոր	0,7-ից մինչև 0, 85	32-ից մինչև 128	2-ից մինչև 5 ՍԹԿ	ՍԹԿ-ից մինչև 4 ատավ	2-ից մինչև 5 ՍԹԿ	ՍԹԿ-ից մինչև 4 ատավ	մեծ է 5 ՍԹԿ-ից	
Խիստ վտանգավոր	փոքր է 0,7-ից	մեծ է 128-ից	5 ՍԹԿ-ից բարձր	մեծ է 4 ատավից	մեծ է 5 ՍԹԿ-ից	մեծ է 4 ատավից		

4 ատավ – ը մյութերի թուլատրելի մակարդակն է՝ ըստ վտանգավորության ցուցանիշներից որևէ մեկի: Աղտոտման գումարային ցուցանիշն աղտոտիչ քիմիական տարրերի կոնցենտրացիաների գործակիցների գումարն է՝ որոշված 1-ին բանձնով.

17. Տրանսպորտային օբյեկտների, արդյունաբերական գոտիների և գյուղատնտեսական հողերի սանիտարական վիճակի ցուցանիշների կիրառելիությունը որոշվում է համաձայն N 4 աղյուսակի.

Սամիտարական վիճակի ցուցանիշի անվանումը	Հողերի սամիտարական վիճակի ցուցանիշների կիրառելիությունը		
	տրանսպորտային օբյեկտների հողեր	արդյունաբերական գոտիների հողեր	գյուղատնտեսական հողեր
Սամիտարական թիվ	-	-	-
Ազոտ ամոնիակային	-	±	±
Ազոտ նիտրատային	-	±	±
Քլորիդներ	-	±	±
pH	±	±	±
Պեստիցիդներ	-	±	+
Ծանր մետաղներ	+	+	±
Նավթ և նավթամթերք	+	+	+
Ցնդող ֆենոլներ	±	+	±
Ղետերգեներ	-	+	+
Օծմբային միացություններ	+	±	±
Ուռուցքածին նյութեր	+	+	+
Վրսեն	+	+	+
Պոլիքլորացված բիֆենիլներ	±	±	±
Ցիանիդներ	+	+	+
Ուղիտակտիվ նյութեր	+	+	+
Մակրոքիմիական պարարտանյութեր	-	-	-
Միկրոքիմիական պարարտանյութեր	-	-	-
Լակտոզոդրական աղիքային ցուայիկներ (Կոլի ձևեր)	+	+	+
Էնտերոկոկներ (Ֆեկալ)	+	+	+
Հիվանդածին միկրոօրգանիզմներ	+	+	+
Հելմինտների ծվեր և թրթուրներ	+	+	+
Աղիքային պարզագույն հիվանդածիմների ցիստեր	+	մասնա	+
Սինանտրոպ ճամճերի թրթուրներ և հարսն յակներ	±	±	±
<p>«+» նշանը նշանակում է, որ տվյալ ցուցանիշը պարտադիր է հողի սամիտարական վիճակը որոշելու համար. «-» նշանը նշանակում է, որ տվյալ ցուցանիշը պարտադիր չէ հողի սամիտարական վիճակը որոշելու համար «±» նշանը նշանակում է, որ տվյալ ցուցանիշը պարտադիր է աղտոտման աղբյուրի առկայության դեպքում:</p>			

VI. ՊԵՏԱԿԱՆ ԿԵՐԱՅԱԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

18 Հողն աղտոտումից պահպանելու պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով՝

**Հայաստանի Հանրապետության
 կառավարության աշխատակազմի
 ղեկավար-նախարար**

Մ. Թոփուզյան